ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010 Երևան,Վազգեն Սարգսյան 3/8, հեռ.594 016
էլ. փոստ anna.vardapetyan@justice.am

№ _____

«____» _____ 20 թ.

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԿ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
(Էլ.փոստի հասցե՝ foi@foi.am)

Հարգելի՛ տիկին Դոյդոյան

Ի պատասխան ՀՀ արդարադատության նախարարին հասցեագրված Ձեր՝ 2019 թվականի հուլիսի 2-ի թիվ 342-51 գրության, հայտնում ենք, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից գործարկվել են հետևյալ էլեկտրոնային ծառայությունները՝

- ապահովված իրավունքի գրանցում (www.registration.am)
- ապահովված իրավունքի գրանցման վերաբերյալ քաղվածքի տրամադրում (www.registration.am)
- պետական միասնական գրանցամատյանից տեղեկանքի (կամ տեղեկատվության) տրամադրում (www.registration.am)
- սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գրանցում (www.e-register.am)
- անհատ ձեռնակատերերի հաշվառում (www.e-register.am)
- սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխություն (www.e-register.am)

- նոտարական ծառայությունների տրամադրման համար էլեկտրոնային եղանակով դիմում և անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացում (www.e-notary.am)
- նոտարական ծառայությունների տրամադրման համար էլեկտրոնային եղանակով հերթագրում (www.e-notary.am)
- ապոստիլի վավերականության ստուգում (www.e-verify.am)
- այլ պաշտոնական փաստաթղթերի իսկության ստուգում (www.e-verify.am):

X _____

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՆՆԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ.՝ Ա. Ավոյան
ՀՀ արդարադատության նախարարություն
594 170